

Պ. Հակոբյան

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ՈՒԿՐԱԽՆԱՑԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Դորպատյան համալսարանում սովորելու տարիներին, ինչպես նաև հետագայում՝ անդրկովկասյան դպրոցներում պաշտոնավարելու շրջանում, հայ նոր գրականության հիմնադիր խաչատուր Աբովյանը անընդհատ շփման մեջ է եղել ռուս և այլ ազգության պատկանող բազմաթիվ գրական-հասարակական գործիչների ու գիտնականների հետ։ Նա անձամբ ճանաչել է ռուսական գրող Վ. Ա. Ժուկովսկուն, սլավոնական երգերի հմուտ հետազոտող Պ. Ի. Պրեյսին և խոշորագույն աստղաբաշխ, ակադեմիկոս Ստրուվեին։ Միևնույն համալսարանում, երեք տարի շարունակ (1830—1833) սովորել է էստոնական դեմոկրատական գրականության հիմնադիր, գրող-լուսավորիչ Ֆ. Ռ. Կրեյցվալդի հետ։ Իիֆլիսի գավառական դպրոցում դասավանդելու շրջանում (1837—1843) մոտիկ հարաբերությունների մեջ է եղել ադրբեջանական մեծագույն գրող և մտածող Միրզա Ֆաթալի Ախունդովի և հայտնի բանաստեղծ Միրզա Շաֆիի հետ, բարեկամական կապեր է ունեցել վրացի գործիչ Զուբալիշվիլու հետ։ Աբովյանի օգնության ու խորհուրդների կարիքն են զգացել այնպիսի գիտնականներ ու ճանապարհորդներ, ինչպիսիք են ռուս հնագետ Ա. Ն. Մուրավյովը, Պրագայի համալսարանի բժշկության դոկտոր Ֆ. Ա. Կոլենատին, Հայաստանի երկրաբանության հետազոտող պրոֆ. Հերման Աբիխը, բավարացի գիտնական Բարոն Ավգուստ Ֆոն Հաբստհաուզենը, Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վագները, բնագետ Կարլ Կոխը, արևելագետ Գևորգ Ռոզենը, գերմանացի բանաստեղծ՝ «Հազար ու մեկ օր արևելքում» տարածված գրքի հեղինակ Ֆրիդրիխ Բոդենշտեդը և ուրիշներ։ Խաչատուր Աբովյանի անձնական ծանոթների թվում կա նաև մի ուկրաինացի՝ Ի. Վ. Ռոսկովչենկո ազգանունով։

Օգտվելով Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյա հորելյանական տարեդարձի առիթից, նպատակահարմար գտանք մի քիչ մանրամասն խոսել Աբովյանի ու իր ուկրաինացի բարեկամի, և արդի ուկրաինական իրականության մեջ Աբովյանի ստեղծագործության շուրջ առաջ եկած հետաքրքրության խնդրի, Աբովյանի ժամանակակից ուկրաինացի բարեկամների մասին։

Ասացինք, որ Աբովյանի անձնական բարեկամների թվում եղել է մի ուկրաինացի. փաստերի ընձեռած հնարավորությունն առայժմ այդ է։ Սակայն յրանից չպիտի եզրակացնել, որ Աբովյանն առհասարակ ուրիշ ուկրաինացի բարեկամներ չի ունեցել, ուկրաինական իրականության մասին աղքատ տեղեկություններ է ունեցել և կամ էլ Ուկրաինայի մասին որոշակի վերաբերմունք հանդես չի բերել։ Ոչ, Մեր ձեռքին եղած որոշ անուղղակի փաստեր հույսալից են ասում։

1830 թ. օգոստոսի վերջերին Պետերբուրգից Դորպատ ուղևորվելիս, ճանապարհին Աբովյանը գրել է «Մուտ Հայկայ ի Հայաստան և արհաւիրք երևակայութեան նորա ի ժամ պատերազմին, որ ի 1826 ամին» բանաստեղծություն՝

ներ: Վերջինս նվիրված է ուսանողի կողմից Հայաստանի ազատագրմանը: Բանաստեղծության մեջ դարերի մշուշից վերակենդանացած հայերի միջակա նախահայր Հայկը (որը հանդես է դալիս իբրև հայ ժողովրդի տրամադրությունների արտահայտիչ) իր որդիներից լսելով, որ պարսկա-թյուրքական լուծը ջարդողը և Հայաստանին փրկություն բերողը հանդիսանում են «Ռիւրիկայ որդիք օրհնեալ», աղերսում է հեթանոս աստվածներին հատուցել այդ «հզօր ազգաց անխնայ բարեաց դիմաց»¹: Ովքե՛ր կարող էին լինել Աբովյանի փառաբանած, Ռյուրիկից սերված հզօր ազգերը, եթե ոչ ուսաները և նրանց եղբայրակից ուկրաինացիները:

Դորպատում ուսանելու տարիներին, իր երկարամյա բարեկամ, ուսնշանավոր աստղաբաշխ Վասիլի Ֆեոդորովի² հետ ունեցած զրույցներից մեկի ժամանակ (1831 թ. դեկտեմբեր), որին ներկա են լինում նաև ուրիշ ուսանողներ, երբ խոսք է բացվում Մոսկվայի համալսարանում՝ ուսանողների վրա գործադրվող ճնշումների մասին («Զրույց վասն զանազան բանդագուշելոց ի Մոսկով ի համալսարանի, ի պատճառս խստութեան պրոֆեսորաց»), նրանք անդրադառնում են նաև խարկովի համալսարանին, որտեղ ինչպես գրել է Աբովյանն իր օրագրում «պրոֆեսորք իբրև ընդ սուղատաց վարին ընդ շտուդենտաց»³:

1838—39 թվականներին կազմած իր «Նոր տեսական և գործնական քերականություն ուսաց լեզվի» աշխատության բաժիններից մեկում, ուր համառոտ կերպով շարադրված են Ռուսաստանի անցյալ պատմության կարևորագույն իրադարձությունները, Աբովյանը թվարկել է նաև մի շարք դեպքեր, որոնք Ուկրաինայի պատմության անց ու դարձերին են վերաբերում (Կիևյան Ռուսիա և այլն): Նույն աշխատության վերջին էջերում, ուր տրված է Ռուսաստանի աշխարհագրության համառոտագրությունը, Աբովյանը Ռուսիայի օրգանական մասն է համարում Ուկրաինան, հիշատակելով վերջինիս նահանգներն ու քաղաքները:

Բերված փաստերից կարելի է հետևեցնել, որ Աբովյանին ծանոթ են եղել Ուկրաինան ու ուկրաինական իրականությունը, և մենք բնավ սխալված չենք լինի, եթե Ռուսաստանի և ուսմեծ ժողովրդի մասին հայ դրականության մեծ երախտավորի ասած զրվատական ու երախտագիտական խոսքերի մեջ տեսնենք նաև նրա վերաբերմունքը՝ Ուկրաինայի և ուկրաինական ժողովրդի մասին:

Ի. Վ. Ռոսկովչենկոն առաջժմ հայտնի միակ ուկրաինացին է, որի հետ Աբովյանը շփվել է բավական երկարատև և ունեցել է գրագրություն: Իսկ ո՞վ էր նա:

Ռոսկովչենկոյին վերաբերող կենսագրական տեղեկությունները, նրա տպագիր ու անտիպ գործերը ցրված են այլ և այլ արխիվային հավաքածուների և պարբերականների էջերում⁴:

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր առաջին, Երևան, 1948, էջ 62: Ի միջի այլոց այս բանաստեղծության թե՛ ուսերևն և թե՛ ուկրաիններեն թարգմանությունների մեջ դուրս է մնացել «Ռիւրիկայ որդիք օրհնեալ» արտահայտությունը, որից և մթաղենել է բանաստեղծության միտքը:

² Վ. Ֆեոդորովը հետադաշում աշխատել է Կիևի համալսարանում, իբրև աստղաբաշխության պրոֆեսոր:

³ Խաչատուր Աբովյանի արխիվ, № 16, էջ 52:

⁴ Նույն տեղում, № 27ա:

⁵ Քանի որ այդ ամենին այժմ Երևանում հնարավորություն չունենք անձամբ ծանոթանալու, հենվում ենք Ի. Կ. Շնիկովի «Խաչատուր Աբովյանի քրիստոսյան տարիները» հոգվածի վրա:

«Կենսագրական համառոտ տեղեկությունները նրան ներկայացնում են որպես միանգամայն օժտված հրապարակախոս, գրականագետ, թարգմանիչ, համալսարանական կրթություն ունեցող անձնավորություն: 1837 թ. նա Լուսավորության Մինիստրության ամսագրի խմբագրի օգնականն էր: Ամսագրում տպագրվում էին գիտական և հանրամատչելի հոդվածներ: Իր պաշտոնի բերումով նա ծանոթացավ ժամանակի բոլոր հայտնի ռուս գրողների հետ: Հարազատ Ուկրաինայի մասին գրած պատմական հետազոտությունները, Շեքսպիրից կատարած փայլուն թարգմանությունները («Ռոմեո և Ջուլետա», «Ամառային գիշերվա երազ» և ուրիշները), որոնք տպագրվում էին «Библиотека для чтения» ամսագրում, Ռոսկոլշենկոյի վրա դարձրին Կոմս Ուվարովի ուշադրությունը... 1839 թ. Ռոսկոլշենկոյին առաջարկվեց Թբիլիսիի գիմնազիայի դիրեկտորի տեղը»¹: Ահա այս անձնավորության հետ սկսեց շփվել Աբովյանը 1841 թ. կեսերից, երբ Ռոսկոլշենկոն նշանակվեց անդրկովկասյան դպրոցների վերատեսչի պաշտոնակատար:

Սկզբնական շրջանում Ռոսկոլշենկոն հավատ ընծայելով կղերա-ավատական բանակին պատկանող և ժամանակի դպրոցական գործերում տնօրենի դերում հանդես եկող հետադեմ գործիչներ Դ. Արզանյանին, Ա. Արարատյանին, Ա. Ֆիլադելֆինին և այլոց, Աբովյանի նկատմամբ ցույց էր տալիս անբարեհամբույր վերաբերմունք: Մի գրությամբ, օրինակ, նա կշտամբում է Աբովյանին առանց թույլտվության մասնավոր աշակերտներ պահելու համար՝ ասելով. «Հանձնարարում եմ Ձեզ, որ դուք անհապաղ խնդրամատույց լինեք պանսիոն բանալու համար թույլտվություն ստանալու, հակառակ դեպքում, վերատեսչությունս առանց ուշադրության առնելու այն օգուտը, որ դա կարող է տալ, ստիպված պիտի լինի փակել այն, իսկ Ձեզ իբրև մի անձի, որին հանձնված է եղել դպրոցական մասի կարգերի վրա հսկելու գործը, և որ ինքը խախտել է կառավարության դրած կանոնները, տուգանել հօրինակ այլոց»²:

Որոշ ժամանակ անց (1842 թ. փետրվարի 28), երբ Աբովյանը խնդրամատույց է լինում պանսիոն բանալու թույլտվություն ստանալու համար, նրա դիմումի վրա մակագրում են. «Աբովյանին մերժել»³, իսկ մի 10 օր հետո (մարտի 10-ին) դպրոցների վերատեսուչը մի ուրիշ հանդիմանական թուղթ է գրում Աբովյանին և աշխատում հասկացնել, որ նա ոչ միայն հնարավորություններ, այլև իրավունք չունի արքունի տան մեջ մասնավոր պանսիոն պահել: Աբովյանը պարզ տեսնում էր, որ Ռոսկոլշենկոն առանց խնդրի էության մեջ խորամուխ լինելու տոն էր տալիս իր գաղափարական թշնամիների զրպարա: անքննիրեն, զրպարտանքներ, որոնց նպատակն էր արգելել Աբովյանի մասնավոր պանսիոնի գործունեությունը և խափանել հայ մանկավարժական մտքի նշանավոր կոթողներից մեկի՝ «Նախաշավիղի» լույս աշխարհ գալը: Սա մենք մեղմացնելու համար չենք ասում, ոչ, այդ պարզ երևում է Ռոսկոլշենկոյի 1841 թ. հուլիսի 28-ի պաշտոնական գրության վրա հետագայում Աբովյանի

¹ Տես Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի հրատարակած «Գրական-բանասիրական հետազոտություններ» ժողովածուն, հատոր 3, Երևան, 1948, էջ 225:

² Դիվան խաչատուր Աբովյանի, հատոր 1, Երևան, 1940, էջ 212 (հայերեն թարգմանությունը): Բնագիրը (ռուսերեն) գտնվում է խաչատուր Աբովյանի արխիվում, № 531:

³ Դիվան խաչատուր Աբովյանի, հատոր 2, Երևան, 1948, էջ 229:

արած գերմաներեն մակագրությունից. «Այս հրամանը գրել տալը մեծ ջանք է պատճառել երկու մարդու...»¹։

Այս բոլորից հետո է ահա, որ Աբովյանը որոշում է հատուկ նամակ գրել Ի. Վ. Ռոսկովչենկոյին և իր սիրտը բաց անել նրա առաջ։ Եվ նա սկսում է այսպես.

«Ապրել և մեռնել հայրենիքի համար — ահա խնդիրը, որ իբրև նպատակ ևս ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից։ Դեռ ճնշված լինելով բռնակալության, նույնպես և տգիտության բեռների ներքո, դեռ ոչ մի զաղափար չունենալով եվրոպական կրթության մասին, ոչ մի նեցուկ և մինչև իսկ ոչ մի միջոց չունենալով հասնելու առաջադրած նպատակիս, ես հոգուս մեջ արդեն տածում էի միայն ու միայն այդ մտածությունը և միայն այդ ցանկությամբ այրվում... Առաջին երդումը, որ ես տվել եմ մեր սուրբ հայրերի սեղանի առաջ, դառն արցունքները, որ ես թափել եմ նրանց գերեզմանների վրա, ի խորոց սրտի հառաչանքները, որ ես նվիրել եմ նրանց աճյուններին, եղել են այն, որ դրանք լինեն իմ պահապան հրեշտակները և բաց անեն իմ առաջ հոգուս նրանց որբ թողած մանուկների զոհվելու ուղին...»²։

Այնուհետև նա պատմում է առաջադրած նպատակին հասնելու համար իր քաջած տանջանքների ու տառապանքների մասին, իր հաղթահարած բազմապիսի արգելքների և այդ ճամփին ընդմիջող կորցրած սիրելիների մասին։ Նա ասում է, որ իր մասնավոր պանսիոնը բաց է արել ոչ թե շահադիտական նպատակով, ինչպես ասում են իր զաղափարական հակառակորդները, այլ հայրենիքին անձնազոհորեն նվիրված, օգտակար մարդիկ պատրաստելու համար, քանի որ «գիտություն ամեն տեղ կարելի է ձեռք բերել, բայց ոչ ամեն տեղ կհաջողվի ինքն իրեն հարմարեցնել իր ապագա կոչման, իբրև մի անհատ, որ ստեղծված է իր մերձավորների բարիքի համար»³։

Աբովյանը Ռոսկովչենկոյին հաղորդում է նաև իր հոգեկան դրամայի մասին, որ շարունակ տանջել ու մաշել է նրան. «Ինչո՞ւ, ա՞խ, ինչո՞ւ բախտը զրկել է ինձ կարողությունից, որ ես ի վիճակի լինեի պահելու և դաստիարակելու ոչ թե քսան, այլ հարյուր և ավելի մանուկներ, ամենաչքավոր դասից, որ սերմանեին նրանց մեջ մարդկային պարտականությունները, — կրկնում եմ ես հաճախ դառը հառաչանքով»⁴։

Եվ, այսպես, կենդանի ձևով իր խոհերն ու մտքերը հաղորդելով Ի. Վ. Ռոսկովչենկոյին, Աբովյանը թախանձում է օգնել և օժանդակել իրեն, որպեսզի կարողանա իրագործել դեռևս մանկության տարիներից փայփայած իր սուրբ ցանկությունները. «Միթե՞ այսպիսի մտքի ունեցողին պիտի վիճակվի ողբալի ճակատագիր»⁵. — եզրափակում է Աբովյանը։

Հրեղեն լեզվով, հորդուն զգացմունքներով և վարակող հայրենասիրությամբ առլեցուն Աբովյանի այս խոսքերը քարերը կկակղեցնեին, ուր մնա Ռոսկովչենկոյին, որին նույնպես հուզել է իր հարազատ Ուկրաինայի վիճակը։

Ինչպե՞ս ընդունեց Աբովյանի այս նամակը Ի. Վ. Ռոսկովչենկոն։ Թեպետ

¹ Քաջատուր Աբովյանի արխիվ, № 531։

² Դիման Քաջատուր Աբովյանի, հատոր 1, էջ 213—4, ուղևորեն քննադիրը Քաջատուր Աբովյանի արխիվ, № 102։

³ Նույն տեղում, էջ 210։

⁴ Նույն տեղում, էջ 213—210։

⁵ Քաջատուր Աբովյանի արխիվ, № 102, էջ 3 (լուսանկարում)։

ժեր ձեռքը չի հասել Ռոսկովչենկոյի ուղղակի պատասխանը¹, որն ամենայն հավանականությամբ գրվել է 1842 թ. սեպտեմբերի 3-ին, սակայն Աբովյանի արխիվում պահպանված մի սևագիր գրությունից² պարզ երևում է, որ նա ընդառաջել է Աբովյանին և թույլատրել պահելու սահմանափակ թվով աշակերտներ: Ուշագրավ է և այն, որ հակառակ ընդունված կարգի Ռոսկովչենկոն դրա համար ոչ թե Անդրկովկասի կառավարչապետից հատուկ թույլտվություն է հանդերձել, այլ հարցն անձամբ է լուծել: Անկասկած է, որ չնայած իբրև պաշտոնյա Ռոսկովչենկոն հարկադրված է եղել հետևելու ցարական ապարատի կարգ ու կանոնին, սակայն անձամբ համակրել է հայ մեծ լուսավորչին, իսկ որոշ դեպքերում էլ՝ աչքաթող արել Աբովյանի «զանցանքները»: Հետաքրքիր է այս առումով մի դեպք: 1842 թ. անդրկովկասյան դպրոցների վերատեսչությունը առաջարկում է Աբովյանին Թիֆլիսի գավառական դպրոցի համար գնել ցարի նկարը: Աբովյանը երկու անգամ այլևայլ պատրվակներով հրաժարվում է այդ առաջադրանքը կատարելուց³: Ռոսկովչենկոն եթե անձնապես Աբովյանի նկատմամբ վատ տրամադրված լիներ, ապա դրանից մեծ աղմուկ կբարձրացներ: Բայց այդ դեպքը նա լուծեց և տալիս:

Ուշագրավ է մի այլ փաստ: 1842 թվականի ապրիլին, նախորդ դեպքից մի քանի օր հետո, Ռոսկովչենկոն Անդրկովկասի կառավարչապետ Դոլովինին է ներկայացնում ինչպես նաև Աբովյանի «նախաշավիղ»-ի քննության արդյունքների մասին զեկուցագիր: Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհուրդը հենվելով կղերական ռեակցիոներներ Դ. Արզանյանի և Ա. Արարատյանի դրավոր կարծիքների վրա, մերժել էր նրա գործածությունը: Ռոսկովչենկոն այդ մասին Դոլովինին զեկուցելով հանդերձ, իր կողմից ավելացնում է. «Աբովյանի այդ գիրքը հորինելը ցույց է տալիս նրա գովանի ուսումնասիրությունը և արժանի է խրախուսանաց իբրև առաջին փորձ: Վասն զի այդպիսի նորամուծությունը ամեն անգամ չեն հաջողվում իրենց մայրենի լեզուն նույնիսկ ամենատաղանդավոր հեղափոխողներին»⁴:

Որ Ռոսկովչենկոն իսկապես բարձր է գնահատել Աբովյանին՝ որպես մարդու և ուսուցչի, այդ երևում է նաև անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի 1842 թ. տարեկան հաշվետվությունից, ուր Աբովյանը բնութագրվում է այսպես. «Պատվական բարոյականության տեր է և շատ ջանասեր. մանավանդ ըստ իր ուսուցչական պարտականությունների»⁵:

1843 թ. գարնանը (մայիսին) Աբովյանը Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վագների հետ շրջագայեց Հայաստանում: Նա եղավ հայրենի Քանաքեռում և Երևանում, կտրեց Արարատյան դաշտի գյուղերը, անցավ հնա-

¹ 1953 թ. ամառը Վրացական ՍՍՌ Պետական պատմական արխիվում մեր կատարած բոլոր որոնումները՝ Աբովյանի նամակին տված Ռոսկովչենկոյի պատասխանը հայտնաբերելու ուղղությամբ, անցան ապարդյուն: Աբովյանի արխիվում նույնպես որոնումներն արդյունք չտվեցին:

² Դա Աբովյանը գրել է իրրև պատասխան Ռոսկովչենկոյին 1942 թ. սեպտեմբերի 3-ի (մեզ չհասած) առաջադրանքի:

³ Տես Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 424, գ. № 168 պատճենները Գրական թանգարան, ինչպես նաև Աբովյանի արխիվ, № 517 և 495:

⁴ «Արձագանք» լրագիր, 1896, № 102, էջ 2:

⁵ Այդ հաշվետվությունից մի փոքրիկ հատված Ա. Երիցյանը հրատարակել է իր «Հնից և նորից» հոդվածաշարում, տես «Արձագանք», 1896, № 102, էջ 3:

մենի Մասսի փեշերով: Եվ ամենուր նրա աչքին ընկան հայրենի ժողովրդի կյանքի անմխիթար ու թշվառ պատկերները: Արովյանի մեջ ցանկություն առաջացավ վերադառնալ հայրենի բնաշխարհ և այնուհետև աշխատել հայրենակիցների մեջ, հայրենակիցների համար: Եվ որովհետև Ռիֆլիսի միջավայրում այլևս հնարավոր չէր առանց կրթեր բորբոքելու անկաշկանդ գործունեություն ծավալել, քանի նրան անընդհատ խանգարում էին կղերական ռեակցիոներները և ցարական բյուրոկրատիան, Արովյանը հրաժարական է տալիս և տեղափոխվում Երևանի գավառական դպրոցը՝ իբրև տեսուչ:

Թե ի՞նչ ընթացք ունեցան Արովյանի և Ռոսկովչենկոյի բարեկամական կապերն այնուհետև, քիչ մանրամասնություններ են առայժմ հայտնի¹, բայց սխալված չենք լինի, եթե ասենք, որ նրանք մինչև Արովյանի ողբերգական կոտորածն էլ (1848 թ. ապրիլի 2-ին հին տոմարով) մնացին լավ բարեկամներ: Գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Բոդենշտեդեր, որը Ռոսկովչենկոյից սովորել է ուկրաիներեն, իր «Հազար ու մեկ օր Արևելքում» գրքում ասում է, որ վերջին տարիները Ռոսկովչենկոն որոշած է եղել Արովյանին Երևանից վերստին Ռիֆլիս բերել և տալ մի ավելի լավ աշխատանք², բայց նրա այդ ցանկությունը չիրականացած, Արովյանը անհետանում է ընդմիջտ, թողնելով վերք ու մրմուռ և՛ իր ժողովրդի, և՛ իր երկարամյա բարեկամների ու այդ թվում նաև Իվան Վասիլևիչ Ռոսկովչենկոյի սրտում:

Բախտը Արովյանին չվիճակեց տեսնելու Ուկրաինան: Իր կենդանության օրոք, որը եղել է թափառումների ու ընդվզումների մի շարունակական շղթա, նա չկարողացավ ոչ մի անգամ այդ երկրում լինել, թեպետ Դորպատից հայրենիք դառնալիս ցանկություն է ունեցել Մոսկվայից կտրել հասնել մինչև Ողեսսա: Շարլոտտե Կրասսին գրած նամակում այդ առթիվ կարդում ենք. «Ես մտադիր եմ մնալ Մոսկվայում միայն մի տասնօրյակ, հետո ճանապարհս Տուլայից կուղղեմ դեպի Ողեսսա»³, բայց այդ իր կամքից անկախ չեղավ. և այն երկիրը, ուր իր կենդանության օրոք չկարողացավ տեսնել հայ մեծ լուսավորիչը, իրենից հետո տարածվեցին իր ստեղծագործությունները:

Սովետական իշխանության տարիներին խաչատուր Արովյանի ուկրաինացի բարեկամների թիվը մի մարդուց վերաճեց մի ամբողջ, բազմամիլիոն ժողովրդի: Այնտեղ, լայնածավալ Ուկրաինայում, Դնեպրի ափերին, ուկրաինացի երիտասարդ ու տարեց մարդիկ անմահ Կոբզարի տաղերի հետ միասին կքվեցին նաև հայ մեծ լուսավորչի անկեղծ հուզականությամբ ու հայրենասիրությամբ գրված «Վերք Հայաստանի»-ի էջերի վրա: Իր անմահ ստեղծագործության շնորհիվ մշտապես ապրող Արովյանը դարձավ նաև ուկրաինացիների համար կյանքի ու գործի ընկեր, ազատարադձության ու հայրենասիրության կենդանի օրինակ: Արովյանի վերարտադրած հայկական իրականության զու-

¹ Հայաստանի Պետական կենտրոնական արխիվում (ֆոնդ 1, ցուցակ 1, դործ № 789-թ. 4) պահպանվել է Ռոսկովչենկոյի մի երկտողը՝ ուղղված Արովյանին, որտեղ նա ջերմորեն շնորհավորում է խ. Արովյանին՝ «Колезский ассесор»-ի աստիճան ստանալու համար: Ռոսկովչենկոյի այդ երկտողը գրված է 1847 թ. փետրվարի 22-ին, Արովյանի ձեռքն է հասել մարտի 4-ին:

² См. F. Bodenstedt's gesammelte Schriften. B. III. Berlin 1865, s. 24. «Roskowschenko, der frühere Vergesetzte, Abowians, war veranlaßt kam SS worden, ihn nach Tiflis zu zihen, um ihm hier ein bessre Stellung zu verschaffen».

³ Խաչատուր Արովյանի ղեկան, հատոր 2, էջ 40:

գահեռները կային նաև ուկրաինացիների անցյալ պատմության մեջ, երբ թյուրք, շվեդ, գերմանացի զավթիչները, ավերում էին նրանց երկիրը, պղծում ուկրաինական մայր հողը, կեղտոտում Դնեպրի կապուտակ ջրերը:

Ուկրաինական ժամանակակից ականավոր բանաստեղծ-ակադեմիկոս Պավլո Տիչինան, ընդգծելով Արուստյանի ստեղծագործության արդիական խոշոր արժեքը, հայ մեծ լուսավորչի գրական ժառանգության նկատմամբ սովետական բազմամիլիոն ժողովրդի, այդ թվում նաև ուկրաինական ժողովրդի, տածած հոգեհարազատությունը, գրել է.

«Խաչատուր Արուստյանի ժառանգությունը մեզ այնքան համահունչն է, որ նրա շատ կոչեր մենք զգում ենք այնպես, կարծես նրանք լինեն մեր ժամանակակիցի կոչեր: Դարի խորքից մենք լսում ենք Արուստյանի ձայնը. «Օրհնեցեք ռուսի ոտը, ջան ջանի տվեք, իրար սիրեցեք»: Այդ նշանակում է՝ օրհնեցեք ռուսների գալուստը, ինքներդ ապրեցեք եղբոր նման, սիրեցեք միմյանց: Մեր նախորդներից ո՞րը, մեր հայրենասերներից, կլասիկներից ո՞րը կարող էր ավելի ուժեղ կերպով արտահայտել հայրենիքի նկատմամբ իր սերը այնպես, ինչպես արտահայտել է Արուստյանը: Այստեղ Խաչատուր Արուստյանը խոսում է այն ժամանակների մասին, երբ ռուսները փրկեցին Հայաստանը պարսիկների ճանկերից...

Մեզ՝ ուկրաինացիներին դա առանձնապես մոտ է և հասկանալի, որովհետև տե՛ղի իրոք ի՞նչ կարող էր պատահել Ուկրաինային պատմության այն դժվարին պահերին, երբ նրա վրա էին հարձակվում թյուրքերը, շվեդները, գերմանական զավթիչները, եթե չլիներ մեր ավագ եղբոր, ռուս մեծ ժողովրդի օգնությունը»¹:

Արուստյանի նոր, բազմամիլիոն բարեկամները այժմ իրենց մայրենի լեզվով կարդում են նրա անմահ «Վերք Հայաստանի»-ն, «Առաջին սեր» գողտրիկ պատմվածքը, հոգեշունչ բայաթիները (քառյակները), մարդկային ու գեղեցիկի մասին անհատնում սիրով ու նվիրվածությամբ տոգորված բանաստեղծությունները: Արուստյանի երկերի թարգմանությունը մասնակցել են ուկրաինական տարեց ու կրտսեր սերնդի պոետներ՝ Պ. Տիչինան ու Մ. Ռիլսկին, Վ. Սոսյուրան ու Ա. Մալիշկոն, Մ. Տրեշչենկոն, Օ. Իլլենկոն և ուրիշներ:

1948 թ. սեպտեմբերին սովետական ժողովուրդները նշեցին Խաչատուր Արուստյանի ողբերգական մահվան 100-ամյակը: Այդ տոնն առանձին հանդիսավորությամբ նշեցին գրողի ուկրաինացի բարեկամները: Հայ գրականությանը քաջածանոթ Պավլո Տիչինայի նախագահությամբ կազմվեց հոբելյանական հանձնաժողով: Ուկրաինական գրողների տանը տեղի ունեցավ հանդիսավոր նիստ: Ռեսպուբլիկական «Правда Украины», «Молодь України», «Радянська Україна», «Київська правда», «Літературна газета» թերթերը և «Вітчизна» ու «Україна» ժուռնալները, մարզային լրագրերը՝ բոլոր 25 մարզերում, ռեսպուբլիկայի ռադիոկայանները ծանոթացնում էին ընթերցողներին և ուկրաինական հասարակայնությանը հայ ժողովրդի հանճարեղ զավակի կյանքի ու ստեղծագործության հետ:

Մեծ լուսավորչի արխիվում այժմ պահվում են այդ օրերին վերաբերող բազմաթիվ լրագրային կտրոններ, որոնք Արուստյանի ժամանակակից ուկրաինացի բարեկամները նվեր են ուղարկել Հայաստանի գրական թանգարանին:

¹ «Սովետական Հայաստան», օրաթերթ, 1948, սեպտեմբեր 24, նաև «Правда Украины», 1948, 8 октябрь.

Այսպես, օրինակ, Կիևի «Радянська правда» թերթի 1948 թ. սեպտեմբերի 23-ի համարում տպագրված է ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ստեփան Կրժիժանովսկու «Հայ գրականության կլասիկը» հոդվածը: Հոդվածագիրը Աբովյանին բնութագրում է իբրև խոշոր հայրենասերի ու դեմոկրատի, որի ամբողջ գործունեության նպատակն է եղել ապրել ու պայքարել ժողովրդի լավագույն ապագայի համար: Նա Աբովյանին մեծարում է պատմական հեռատեսության համար, որովհետև վերջինս տեսնելով, որ այնուհետև Հայաստանի բախտը անբաժան է ռուս մեծ ժողովրդի բախտից, փառաբանել է հայ և ռուս ժողովուրդների անքակտելի բարեկամությունը և պատգամել հետնորդներին սրբությամբ պահելու այն: Ուկրաինացի քննադատը վերլուծելով գրողի «Վերք Հայաստանի» վեպը արժեքավորում է վերջինիս մեջ արտահայտված հայ ժողովրդի բողոքը պարսկական կոպիտ ու խավար բռնապետության դեմ, միջնադարյան կղերաավատական ղեկավարող գաղափարախոսության մերկացումները և եվրոպական գաղութարարների քննադատությունը:

Աբովյանի հորելյանի օրերին «Правда Украины» թերթը տպագրում է ուկրաինական բանաստեղծ Միկոլա Տրեշչենկոյի «Пам'яті Абов'яна» բանաստեղծությունը: Այստեղ հեղինակը խոսում է այն իղձերի մասին, որոնք շաբոնակ փայփայել է հայ հայրենասեր գրողը, և որոնք այժմ դարձել են իրականություն:

Між сивими стрімчастими шпелями,
де простяглись долини у садах,
тече Занга прозорими струмками,
що з Волгою зріднилась у віках,
навік з'єднались з руськими братами
онуки Гайка в спільних берегах.

Та якщо хто дорогою крутою
йде з Канакєра часом в Єрєван,
він раптом згадає, як під горою
сочилась тут горяча кров із ран,
що томував їх з мукою терпкою
колись огненноустий Абов'ян.

Тепер твій край у братньому єднанні
з всіма народами країни Рад
до комунізму йде. І ти в пошані
у дружнім колі, де, як любий брат,
твій Гайастан у щирому змаганні
будує з нами світлий сонцєград.

Хвала тобі лунає без упину
на Волзі, на Дніпрі, на Сир-Дар'ї.
Схвильовано ти чуєш в цю хвилину,
як лине слава через всі краї
до гір Вірменії в її долини,
де гоїв рани ти колись н.¹

¹ 86. «Правда Украины» (Киев), 23 сентября, 1948 г.

1948 թ. սեպտեմբերի 23-ին Երևանում տեղի ունեցավ Աբովյանի մահվան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը։ Այդտեղ էր նաև եղբայրական Ուկրաինայի դելեգացիան՝ բանաստեղծ-ակադեմիկոս Պավլո Տիշինայի գլխավորությամբ։ Կարելի էր պատկերացնել Աբովյանի հիշատակը մեծարելու ավելի պերճախոս փաստ, քան այն, որ ուկրաինական ժողովրդի զավակը, ամբիոնից, հայերեն արտասանում էր հայ ժողովրդի մեծ զավակի խոսքերը, որոնք նա նետել էր իբրև մարտահրավեր իր հայրենիքի ազատությանը, խաղաղ կյանքը ու ստեղծագործ աշխատանքը վրդովող պարսկա-թյուրքական շարդարարներին։ «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չեք ճանաչում», կամ անմահ Աբովյանի սրբազան պատգամը. «Օրհնեցեք ոռոսի ոտը, ջան ջանի տվեք, իրար սիրեցեք»։

Հանդես գալով Աբովյանի հիշատակը մեծարելու երեկոյին Պավլո Տիշինան խոսում է Աբովյանի ստեղծագործության արդիական արժանիքներին, նրա հեռատեսության, նրա կամքի ու տոկունության մասին։ «Համարձակություն, անվեհերություն, անձնազոհություն — ահա թե ինչն է մեզ ապշեցնում Աբովյանի բնավորության մեջ։ Լինելով իր հայրենիքի բոցաշունչ հայրենասերը, որը իր ժողովրդի հետ առաջինը սկսեց խոսել. հենց նրա պարզ ու հասկանալի լեզվով, Աբովյանը ո՛չ միայն շփանցավ բանալու Հայաստանի վերքերը, այլև ասաց, ինչպես պետք է ուրեմն բուժել այդ վերքերը, ինչ պիտի անի հայ ժողովուրդը։ Ամենից առաջ պետք է լինի անխնա, լինի անգութ մեր թշնամիների նկատմամբ»¹։

Հանդիսավոր երեկոյին Պավլո Տիշինան կարդաց նաև Աբովյանին նվիրած իր բանաստեղծությունը՝ ուկրաիներեն լեզվով, որտեղ կարծես նա մարմին էր տվել Աբովյանի անձի ու գործի այն ըմբռնմանը, որն ունի այսօր ուկրաինական ժողովուրդը իր մտքում ու հոգում։

Повна чаша кришталева!
Всі в саду в плодах дерева!
Ще ж дерева з його саду,
зелен-саду-винограду!
Славмо ж ми того піснями,
чий сьогодні дух із нами
й сила творча, полум'яна—
Хачатура Абовяна!

Բազմաթիվ տասնամյակներ են մեզ այսօր բաժանում Աբովյանի գործունեության ժամանակներին։ Փոխվել է կյանքը, աշխարհը, մարդիկ։ Կոմունիստական պարտիան, մարդկության մեծ հանճար լենինի գլխավորությամբ փոխեց պատմության ուղին, ստեղծեց աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը և գծեց Ռուսաստանի ժողովուրդների ապագա ճանապարհը։ Շնորհիվ լենինյան ազգային քաղաքականության անցյալում գրեթե իրարից անտեղյակ ազգերը մեր օրերում մոտիկից ճանաչեցին միմյանց, ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքը բերելով իրենց հոգու ու մտքի կերտած գանձերը։

Եվ հաշատուր Աբովյանը, որն անցյալում խոսք ու զրույցի էր բռնվել ուկրաինացիների հետ, նրանց երկրից դուրս, առիթներով, Աբովյանը, որին անցյալում՝ Ուկրաինայում թերևս քչերն են ճանաչել ու իմացել, այժմ համարձակորեն մտել է նրանց երկիրը, ճանաչվել ու գնահատվել միլիոններին։

¹ «Правда Украины», 8 октября, 1948 г.